

**«ՋՈՐԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

Հոդված 6. Ռազմաուսումնական հաստատությունների ստեղծումը և գործունեությունը, դրանց իրավական վիճակի առանձնահատկությունները

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատությունները (այսուհետ՝ ռազմաուսումնական հաստատություններ) ստեղծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

2. Ռազմաուսումնական հաստատություն ստեղծելու մասին որոշմամբ հաստատվում են ռազմաուսումնական հաստատության՝

- 1) անվանումը.
- 2) գտնվելու վայրը.
- 3) գործունեության խնդիրները, նպատակները և գործառույթները.
- 4) կանոնադրությունը.

5) կառուցվածքը, թվաքանակը, հանձնվող (ամրացվող) զույթի, այդ թվում՝ զենքի և ռազմամթերքի կազմը, դրա օգտագործման կարգը.

6) գործունեության հետ կապված՝ սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված այլ նորմեր:

3. Ռազմաուսումնական հաստատություն ստեղծելու մասին որոշմամբ ռազմաուսումնական հաստատության կանոնադրության, կառուցվածքի, թվաքանակի, հանձնվող (ամրացվող) զույթի, այդ թվում՝ զենքի և ռազմամթերքի կազմի, դրա օգտագործման կարգի հաստատման իրավունքը կարող է վերապահվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին: Ռազմաուսումնական հաստատությանը կարող է տրվել զորամասի պայմանական համար:

4. ~~Ռազմաուսումնական հաստատություններն իրականացնում են միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր՝ օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա: Ռազմաուսումնական հաստատությունների կողմից կրթության գործընթացը կազմակերպվում է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետական կրթական չափորոշիչներին և կրթական ծրագրերին համապատասխան: Ռազմաուսումնական հաստատության գործունեության և կառավարման համակարգի առանձնահատկությունները սահմանվում են ռազմաուսումնական հաստատության կանոնադրությամբ:~~

«Ռազմաուսումնական հաստատություններն իրականացնում են միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն կրթական ծրագրեր՝ օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա: Ռազմաուսումնական հաստատությունների կողմից կրթության գործընթացը կազմակերպվում է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետական կրթական չափորոշիչներին և կրթական ծրագրերին համապատասխան: Ռազմաուսումնական հաստատության գործունեության և կառավարման համակարգի առանձնահատկությունները սահմանվում են ռազմաուսումնական հաստատության կանոնադրությամբ:»:

5. Բարձրագույն ռազմաուսումնական հաստատությունները կարող են գործել համազորային կամ ռազմագիտական համալսարանի կամ ինստիտուտի ձևով:

6. Ռազմաուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ տարածվում են սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ զորամասերի գործունեությանը ներկայացվող պահանջները: Ռազմաուսումնական հաստատությունների կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության, ռազմաուսումնական հաստատություններում զինվորական ծառայության կազմակերպման, զինվորական կամ պետական այլ ծառայություն անցնելու, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են օրենքով և ռազմաուսումնական հաստատության կանոնադրությամբ:

8. Սույն հոդվածի համաձայն՝ ռազմաուսումնական հաստատությունների ստեղծմանը և գործունեությանը վերաբերող նորմերը տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմագիտական բնույթի հաստատությունների ստեղծման և գործունեության իրականացման վրա:

9. Ռազմաուսումնական հաստատության կարգավիճակ կարող է տրվել նաև բարձրագույն ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանմանը, որի գործունեության առանձնահատկությունները սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ: